ԱՐՈՒՃԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ ՈՒՇԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ № 5 ԴԱՄԲԱՐԱՆԸ
(Թաղման ծեսը մեկնաբանելու փորձ)

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

1990 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Շամիրամի հնագիտական ջոկատը, ՀՀ նախարարների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման և օգտագործման գլխավոր վարչության հետ կնքված պայմանագրով, պեղումներ կատարեց Արուճի (Արագածոտնի մարզ) գամբարանադաշտում, որի տարածքում Դպրևան բնակավայրն են կառուցում Ադրբեջանի Շամախու շրջանի Մատրասա գյուղից հալածված հայ փախստականները:

Դամբարանադաշտը տարածվում է Շամիրամաձորի ձախ ափին, Արուճ գյուղի արևելյան կողմում գտնվող վաղբրոնզեդարյան Ջորաբերդ բնակավայրի դիմաց, Շամիրամի ամրոցից դեպի հյուսիս և Շամիրամի մեծ դամբանաբլուրներից հյուսիս-արևմուտք: Այս դամբարանադաշտում 1976–1977 թթ. պեղվել է երեք դամբանաբլուր, որոնցից երկուսը համարվում է թռեղք-կիրովականյան հնագիտական մշակույթին պատկանող և թվագրվում մ. թ. ա. 2-րդ հազարամյակի I կեսով[1], իսկ երրորդ դամբանաբլուրը թվագրվում է մ. թ. ա. 2-րդ հազարամյակի կեսերով[2]: Դամբանադաշտն անվանվում է «դամբանատեղի»[3] և նշվում, որ այն «իրենից ներկայացնում է ոչ բարձր թմբի գագաթով հարավից հյուսիս ձգվող... թաղումների շղթա»[4]: Սակայն հնագիտական տեղազննությամբ պարզվել է, որ այս դիտողությունը չի համապատասխանում իրականությանը:

Պեղված № 5 դամբարանը գտնվում էր Երևան–Գյումրի ավտոմայրուղուց մոտավորապես 200 մ դեպի հարավ: Այն սկզբնապես ունեցել է 0,7-0,8 մ բարձրությամբ դամբանաթումբ, որի մակերեսին տեղ-տեղ երևացել են դամբանախցի ծածկասալերը: Դամբանաթումբն օղակված է եղել կրոմլեխով, որին արևելյան կողմից հպված է եղել ուղղահայաց կանգնեցված տուֆի անմշակ սալերով կառուցված, ուղղանկյուն հատակագծով մի ցանկապատ: Ցանկապատված տարածքը, իր հերթին, ցից դրված սալերի երկու

---

[1] Գ. Ա ր ե շ յ ա ն, Հ. Ս ի մ ո ն յ ա ն, Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Հայագիտական կենտրոնի 1976 թվականի դաշտային հնագիտական աշխատանքները.– «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ ԲԵՀ), 1977, № 3, էջ 273:

[2] Գ. Ա ր ե շ յ ա ն, Հ. Ս ի մ ո ն յ ա ն, Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Գ. Ք ո չ ա ր յ ա ն, Հ. Օ հ ա ն յ ա ն. Հայագիտական կենտրոնի 1977–1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները.– ԲԵՀ, 1979, № 2, էջ 221:

[3] Նույն տեղում, էջ 220: Գ. Ա ր ե շ յ ա ն, Հ. Ս ի մ ո ն յ ա ն, Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 272:

[4] Г. Е. А р е ш я н. Курганы Аруча.– В кн.: "Археологические открытия 1978 года". М., 1979, с. 518.

շարքով բաժանված է եղել արևելք-արևմուտք երկայնական առանցքներով երեք հատվածների, որոնցից կենտրոնականի արևմտյան մասում գտնվել է թաղման սրահի մուտքը[5]: Հողային աշխատանքների հետևանքով դամբարանի վերգետնյա հատվածն ավերվել էր. դամբանաբլուրը հեռացվել էր մինչև մայր հողի մակարդակը, կից կառույցները և նախամուտքը ոչնչացվել էին: Այնպես որ, պեղումների պահին դամբարանը նկատելի արտաքին նշաններ չուներ: Զկային ծածկասալերը, ինչպես նաև թաղման սրահի հյուսիսարևմտյան անկյան վերին շարքի քարը:

Ուղղանկյուն հատակագծով դամբանասրահն ուղղված էր դեպի արևմուտք, շարված էր տափակ դրված սև գույնի տուֆ քարերով (հինգ շարք, բացառությամբ արևելյան պատի), որոնց հիմքերը դրված էին ժայռի վրա: Դամբանասրահի երկարությունը 3,50 մ էր, առավելագույն լայնությունը՝ 2,10 մ (կենտրոնում), խորությունը՝ 1,10-1,25 մ (աղ. I): Երկայնակի պատերը շարված էին որոշ կորությամբ, արևմտյան (լայնակի) պատը (երկարությունը՝ 1,80 մ) 0,20 մ-ով կարճ էր արևելյանից: Պատերի շարվածքի ամրության համար կիրառված էր հողաշաղախ (ցեխ): Արևելյան պատի քարերը չափերով մեծ էին մյուս պատերի քարերից, դրանց շարվածքը նեղսի կողմից անհարթ էր, իսկ արևմտյան պատը շարված էր լավականին կանոնավոր, փաստ, որը խոսում է հօգուտ արևելակողմյան մուտքի: Ննջեցյալն ամփոփված էր դամբանասրահի արևմտյան հատվածի կենտրոնական մասում, դիաթաղման եղանակով: 50–60 տարեկան հասակում մահացած տղամարդու կմախքը տեղադրված էր աջ կողքի վրա. ոտքերը կծկված, «քնածի» դիրքով, գլուխը դեպի արևմուտք, դեմքով դեպի հարավ, ստորին ծնոտը գտնվում էր գլխի ետևում[6]: Գանգից դեպի արևմուտք դրված էր վանակատի մեկ ցլեի (աղ. II, 5):

Դամբարանի թաղման սրահի արևմտյան պատի մոտ դրված էին զոհաբերված խոշոր և մանր եղջերավոր կենդանիների կողոսկրեր[7], ինչպես նաև մեծից փոքր հերթականությամբ շարված էին չորս խեցանոթ (աղ. I, աղ. II, 1–4): Դամբանասրահի հարավարևմտյան անկյունում դրված էր սև փայլեցված մակերևույթով մի փոքր կարաս, որի հատակի մոտ թրծումից հետո փոքրիկ անցք էր արված (աղ. II, 1): Զոհաբերված կենդանիների և արևմտյան պատի արանքում տեղավորված էր սև փայլեցված մակերևույթով, միջին բարձրության վզով մի ինքնատիպ սափոր, որի իրանից դեպի ուսերն անցումը կատարված էր ներճկված երկու հորիզոնական գոտիներով (աղ. II, 2): Սափորն ամբողջացող էր, բայց կոտրված: Դրա բեկորներից երկուսը գրված էին ննջեցյալի ոտքերի հետևում: Սափորից դեպի հյուսիս գտնվում էր սև փայլեցված մակերևույթով, կարճ վզով մի խեցանոթ, ուսերին՝ զույգ ատամնավոր անվիկով կատարված բեկյալ-կետազարդ պատ-

---

[5] Գ. Ա ր ե ղ յ ա ն, Գ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Արուճի դամբանատեղի № 5 դամբարանը.– Հայաստանի Հանրապետությունում 1989–1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. Զեկուցումների թեզիսներ (այսուհետև՝ ԴՀԱԱ). Երևան, 1991, էջ 24–26:

[6] Մարդաբանական ուսումնասիրությունը կատարել է մարդաբան Ռ. Ա. Մկրտչյանը:

[7] Կենդանիների ոսկրերի ուսումնասիրությունը կատարել է ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Ս. Կ. Մեժլումյանը:

կերներ: Սրահի հյուսիսարևմտյան անկյունում սև փայլեցված մակերևույթով, ուսերին փայլացանց կրող մի քերեղան կար:

Աղ. I



Շամիրամ 2 դամբարանադաշտ
Ն· 5 դամբարան

Չափագրությունը՝
Լ. Վ. Կիրակոսյանի

Պեղումներով հայտնաբերված խեցանոթներն իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի և հարակից շրջանների ուշ բրոնզի դարաշրջանի բազմաթիվ հուշարձաններում: Բարձր ուսերով լայնաբերան կարասին աղերսվում են Շամիրամի №5 մեծ դամբանաբլուրից[8], Արթիկի դամբարանադաշտի վաղ փուլի № 53, 62, 71 և մի շարք այլ դամբարաններից[9], Շամխորի շրջանից[10], Վրաստանում՝ Զեմո Բոդբեի №1 (մ. թ. ա. XV–XIV դդ.) և Օլեի №11 դամբանաբլուրներից[11] գտնված կավանոթները: Ձևով, չափերով, իրանի ստորին մասում արված անցքով կարծես հիշյալ կարասի նմանակը լինի ուշբրոնզեդարյան մշակույթի վաղ փուլին պատկանող Թրելիի №55 դամբարանում հայտնաբերված կավանոթը[12]:

Ուսերը փայլանախշ եռանկյունիներով զարդարված սափորին (աղ. II, 2) ձևով առնչվում է Լճաշենի առաջին տեղամասի ուշբրոնզեդարյան վաղ փուլի №5 դամբանաբլուրից հայտնաբերված ձագարաձև պարանոցով սափորը (Հայաստանի պատմության պետական թանգարան (այսուհետև՝ ՀՊՊԹ), հավաքածու 2009/186), որը զարդաբանված է մեկընդմեջ կարմիր և սպիտակ ներկով գունավորված կետածածկ եռանկյունիներով: Հորիզոնական ներկված գոտիներով են ձևավորված Քարաշամբի №46 դամբարանից հայտնաբերված սափորի ուսերը[13]: Պարանոցի բարձրությամբ մեր երկու սափորների համեմատ, միջին դիրք է գրավում Ցխինվալիի (Հաբավային Օսեթիա) անտառկոմբինատի №3 դամբարանից գտնված սափորը[14], որի ուսերը ձևավորված են հորիզոնական գոտիով, իսկ դրանցից վեր փայլեցման եղանակով արված, գագաթով վերև ուղղված եռանկյունիներ են: Կարճավիզ խեցանոթին (աղ. II, 3) որոշ նմանություն ունի Քարաշամբի դամբարանադաշտի №60 դամբարանից գտնված անոթներից մեկը[15]: Թեք ուսերով «կողավոր» կավանոթները, ավելի շուտ, աղերսվում են մետաղյա սպասքի հետ, ինչպես, օրինակ, Լոռի բերդի դամբարանադաշտի ուշբրոնզեդարյան №2 դամբարանում հայտնաբերված կաթսան[16] կամ Տավուշի շրջանի Արծվաբերդ գյուղի մոտ գտնվող Բուղաքաբ դամբարանադաշտից

---

[8] Г. Е. Арешян, В. Э. Оганесян, Ф. М. Мурадян, П. С. Аветисян, Л. А. Петросян (*այսուհետև՝* Г. Е. Арешян и др.). Конец среднего бронзового века в междуречье Аракса и Куры. — ИФЖ, 1990, № 1, с. 60, табл. II, 10.

[9] Т. С. Хачатрян. Артикский некрополь. Каталог. Ереван, 1979, с. 133, 136 (верхний слева), 139.

[10] О. А. Даниелян. Впускные погребения из поселений Рустепеси и Иланлы тепе. — "Материальная культура Азербайджана", т. VIII, Баку, 1976, с. 77, табл. Iб, 3.

[11] კ. ფიცხელაური. აღმოსავლეთ საქართველოს ტომთა ისტორიის ძირითადი პრობლემები ძვ. წ. XV-VII სს. (არქეოლოგიური ძანალების მიხედვით). თბილისი, 1973, ტაბ. LII, 1, LIII, 2.

[12] თბილისი. არქეოლოგიური ძეგლები, I, თბილისი, 1978, გვ. 79, ნახ. 37, 452.

[13] Г. Е. Арешян и др. *Նշվ. աշխ., էջ 59, աղ.* I, 1:

[14] კ. ფიცხელაური. *Նշվ. աշխ., աղ.* LIV, 2:

[15] Г. Е. Арешян и др. *Նշվ. աշխ., էջ 62, աղ.* III, 5:

[16] С. Г. Деведжян. Лори-Берд, I. Ереван, 1981, табл. VI, 2.

գտնված կաթսան[17]: Պեղումներով հայտնաբերված քերեղանի (աղ. II, 4) զուգահեռները կարելի է տեսնել Լճաշենի, Արթիկի, Լոռի բերդի և այլ դամբարանադաշտերի ուշբրոնզեդարյան վաղ համալիրներում, Բայբուրթի (Թռեղք)[18], Ցխինվալիի[19] թաղումներում, Մինգեչաուրի բրոնզեդարյան բնակավայրում[20]:

Այսպիսով, №5 դամբարանի թաղմանն ուղեկցող խեցանոթների խումբը սերտորեն աղերսվում է հիմնականում ուշ բրոնզի դարաշրջանի վաղ փուլի համալիրներին: Մեր համալիրի ճշգրիտ թվագրմանը նպաստում է, հատկապես, մետաղյա անոթների ձևերը կրկնօրինակող խեցանոթների առկայությունը, որոնք, անկասկած, պատկանում են Հայաստանի ուշբրոնզեդարյան մշակույթի վաղ փուլին: Ուստի, Արուճի դամբարանադաշտի № 5 դամբարանը կարելի է թվագրել մ. թ. ա. XV–XIV դդ.: Քանի որ նույն ժամանակաշրջանով են թվագրվում նաև Շամիրամի մեծ դամբանաբլուրները, և դրանցում հայտնաբերված հնագիտական իրերը համահունչ են № 5 դամբարանի նյութերին, ապա չի բացառվում, որ այս երկու հուշարձանախմբերը պատկանեն միևնույն դամբարանադաշտին: Առայժմ դրանք բաժանված են վարելահողով, որի եզրերին նշմարվում են դամբարանների հետքեր:

Անդրադառնանք № 5 դամբարանի կառուցվածքի առանձնահատկություններին: Կարծում ենք, թաղման կառույցի վերն արված նկարագրությունից կարելի է եզրակացնել, որ նախ շարվել են դամբանասրահի երեք պատերը, տեղադրվել ծածկասալերը, կատարվել է թաղումը, և ապա շարվել արևելյան պատը մուտքը. չինարարական հնարք, որ հատկանշական է դամբանային նման համալիրներին: Ելնելով կառուցվածքային հիշյալ առանձնահատկություններից և նկատի ունենալով, որ կմախքը և ուղեկցող նյութերը ծածկված էին ջրաբերուկների շերտով, կարելի է ենթադրել, որ դամբանասրահն սկզբնապես հողով լցված չի եղել: Նման դամբարանների գոյությունը Հայաստանում վաղուց հավաստված է հնագիտական պեղումներով: Դամբանասրահի դեպի արևմուտք ուղղվածությունը, ամենայն հավանականությամբ, կապված է «այնկողմնային աշխարհի» մասին եղած պատկերացումների հետ, իսկ արևելք-արևմուտք ուղղության ճշգրտությունը հուշում է, որ թաղումը կատարվել է գարնանային կամ աշնանային դիշերահավասարի օրերին: Կրոմլեխով շրջափակված դամբանթմբով ծածկված ստորգետնյա քարարկղային դամբանասրահը թաղման կառույցի կայուն ձևերից է, որը գոյատևում է Հայկական լեռնաշխարհում վաղ բրոնզեդարից մինչև միջնադար: Կառուցվածքով № 5 դամբարանի զուգահեռը, որն ամենամոտն է նաև տարածական առումով, դրանից մո-

---

[17] Ս. Ե ս ա յ ա ն. Հայաստանի բրոնզեդարյան մետաղյա սպասքները.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1987, №2, էջ 60-61, աղ. II, 1:

[18] К. Н. П и ц х е л а у р и. Восточная Грузия в конце бронзового века.– "Труды Кахетской археологической экспедиции", вып. III, Тбилиси, 1979, табл. IV а, 7; б, 5.

[19] Նույն տեղում, աղ. III բ, 4-5:

[20] Г. М. А с л а н о в, Р. М. В а и д о в, Г. И. И о н е. Древний Мингечаур. Баку, 1959, с. 41, табл. XXX, 9.

տավորապես 85 մ դեպի հարավ գտնվող միջինբրոնզեդարյան № 4 դամբանաբլուրն է: Համանման թաղման կառույցներից են բաղկացած նաև ոչ հեռու գտնվող Շամիրամի մեծ դամբանաբլուրները[21], ինչպես նաև Վերին նավերի[22], Օշականի[23], Սասունիկի[24] և պատմական Արագածոտնի բազմաթիվ այլ դամբարանադաշտերի դամբարանների զգալի մասը: Սակայն, իհարկե, հիշյալ տիպի դամբարաններից առավել տպավորիչ են Լճաշենի[25], Լոռի բերդի[26] և Թռեղքի[27] դամբանաբլուրները: Դամբարանների կառուցվածքը, անշուշտ, պայմանավորված է կառուցողների աշխարհայացքով:

Աղ. II



Դամբանաթմբային ծիսակարգի հիմնական գաղափարը համարվում է ննջեցյալների վերածնունդը և ենթադրվում է, որ դամբարանն (ամբողջությամբ) ընկալվել է որպես տիեզերքի մանրակերտ[28]: Դամբանային համալիրը կառուցելու գործողությունն ինքնին խորհրդանշում էր տարածքի

---

[21] *Լ. Կիրակոսյան. Շամիրամի մեծ դամբանաբլուրների ճարտարապետությունը.– ԼՀԴ, 1988, №10, էջ 88-93:*

[22] *Հ. Սիմոնյան. Պեղումներ Վերին նավերում.– ԴՀԱԱ, 1989, էջ 10-12:*

[23] С. А. Есаян, А. А. Калантарян. Ошакан I. Основные результаты раскопок 1971-1983 гг. Ереван, 1988, с. 82.

[24] Н. Енгибарян. Раскопки могильника в Сасунике.— В кн.: "Археологические открытия 1984 года". М., 1986, с. 431.

[25] А. О. Мнацаканян. Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г. (предварительное сообщение).— "Советская археология" (*այսուհետև՝* СА), 1957, № 2, с. 146-153. *Նույնի՝* Лчашенские курганы (раскопки 1956 года).—"Краткие сообщения Института археологии АН СССР", вып. 85, М., 1961, с. 66-72.

[26] С. Г. Деведжян. *Նշվ. աշխ., էջ* 19-20:

[27] Б. А. Куфтин. Археологические раскопки в Триалети, I. Опыт периодизации памятников. Тбилиси, 1941.

[28] Е. А. Савостина. Сакральное пространство и погребальный обряд боспорских гробниц.— В кн.: "Исследования в области балто-славянской духовной культуры. Погребальный обряд". М., 1990, с. 241.

սրբագործումը: Եզրագծելով դամբարանի կրոմլեխը, հները, հավանաբար, սահմանազատում էին «այս» և «այն» աշխարհները[29]: Դիաթաղման եղանակը, ըստ երևույթին, այնքան հին է, որքան «թաղում» հասկացությունն ընդհանրապես: Ուշբրոնզեդարյան Հայաստանում այն կարող էր կապված լինել մեռնող-հառնող Արա աստվածության մասին եղած պատկերացումների հետ[30]: Շատ հին է նաև տղամարդ ննջեցյալներին գերեզմանում աջ կողքին պառկեցնելու սովորությունը[31]: Ինչպես հայտնի է, մասնավորապես հնդեվրոպական ավանդույթում «աջը» կապված էր արական, իսկ «ձախը» իգական սկզբի հետ[32]: Դամբարանում ննջեցյալին այս կամ այն դիրքով ամփոփելը, հավանաբար, նույնպես որոշակի պատկերացումների արտացոլումն է[33]: Հնարավոր է, որ քնած մարդու դիրքով թաղումը կապված լինի մահը որպես «քուն» ընկալելու հետ: «Քնածն ու հանգուցյալը նման են իրար-/Արդյոք քունը մահվան պատկերը չէ՞»,— ասում է Ուտնափիշտին Գիլգամեշին[34]: Մահ-քուն առնչության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ կան հայ բանահյուսությունում[35]:

Դամբարաններում վանակատի և կայծքարի բեկորներ դնելու արարողությունը հյուսիսարևելյան Հայաստանում գոյություն է ունեցել դեռևս պղնձեքարեդարում[36]: Հանգուցյալի գլխի մոտ վանակատի կամ կայծքարի կտորներ զետեղելը, հավանաբար, մտել է չար ոգիները (չար աչքը) նրանից վանելու ծիսակատարությունների պահպանական համակարգի մեջ[37]: Երբեմն ննջեցյալի գլխի կողմում տեղադրվել է վանակատե նետասլաք[38]: Թերևս ավելորդ չէ հիշել, որ մետաղե առարկաները նույնպես տեղադրվել են, որպես կանոն, դիակի գլխի կողմում[39]: Այդ արարողությունը ևս, ամե-

---

[29] В. С. Ольховский. Погребально-поминальная обрядность в системе взаимосвязанных понятий.— СА, 1986, № 1, с. 68.

[30] Г. Капанцян. Историко-лингвистические работы. Ереван, 1956, с. 274, 306.

[31] В. Тэрнер. Символ и ритуал. М., 1983, с. 99.

[32] Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. Т. II. Тбилиси, 1984, с. 784.

[33] Л. Вулли. Ур халдеев. М., 1961, с. 54.

[34] Эпос о Гильгамеше ("О все видавшем"). Перевод с аккадского и коммент. И. М. Дьяконова. М.—Л., 1961, с. 71.

[35] *Սասունցի Դավիթ. Երևան, 1961, էջ 237: Գ. Սրվանձտյանց. Մանանա. Կ. Պոլիս, 1876, էջ 317: Ս. Բ. Հարությունյան. Հայ ժողովրդական հանելուկներ. Երևան, 1965, էջ 108 և այլն:*

[36] О. А. Абибуллаев. Энеолит и бронза на территории Нахичеванской АССР. Баку, 1982, с. 39-50.

[37] Б. В. Техов. Тлийский могильник (комплексы XVI—X вв. до н. э.). Тбилиси, 1980, с. 52-53; А. Е. Симонян. Обсидиан и кремень как атрибуты погребального обряда.— "Вопросы изучения армянской народной культуры (культура и язык)". VIII конференция молодых ученых. Тезисы докладов. Ереван, 1988, с. 79-81.

[38] Г. П. Кесаманлы. Хачбулагский курган с массовым захоронением.— "Материальная культура Азербайджана", т. VIII, Баку, 1976, с. 55.

[39] Т. С. Хачатрян. Древняя культура Ширака (III—I тыс. до н. э.). Ереван, 1975, с. 141.

նայն հավանականությամբ, «չարխափան» նպատակ է հետապնդել, քանի որ, ըստ հին հավատալիքների, չար ոգիները խուսափում էին մետաղից[40]:

Այժմ քիչ ավելի մանրամասն անդրադառնանք հանգուցյալի ստորին ծնոտը դանգից անջատելու արարողությանը, որը կիրառվել է բրոնզեդարյան Հայաստանում և դոյատևել մինչև հելլենիստական գարաշրջանը: Քարաշամբի դամբարանադաշտի մի շարք դամբարանների համար գանգերից ծնոտների հեռու գտնվելը օրինաչափ է համարվում[41]: Նման երևույթ է դիտարկված Սյունիքի որոշ թաղումներում (Տանձավերի Միջակ արտ դամբարանադաշտ[42], Սիսիանի փորձակայանի տարածք[43] և այլն), Շամխորի շրջանի Ռուսթեփեսի բնակավայրի № 1 ներթող թաղումում[44], Կարմիր բլուրի հելլենիստական դամբարաններից մեկում[45] և բազմաթիվ այլ դամբարաններում: Կարծում ենք, որ ստորին ծնոտը դանգից անջատելու արարողության հիմքում ընկած է հանգուցյալին չար ոգիների վնասաբեր ազդեցությունից պահպանելու և նրա վերածննդին նպաստելու ձգտումը: Ինչպես հայտնի է, ըստ հին հավատալիքների, դիակիզման խարույկի կամ դամբարանի տարածքը համարվում էր չար ոգիների բնակության վայրերից մեկը: Նրանց վնասազերծելու նպատակով ծիսական տարածքը «մաքրագործվում էր» կրակով և ջրով, պահպանական նկատառումներով օղակվում էր սրբազան շրջանով (քարե, հողե, փորված), սփռվում էին վանակատի և կայծքարի բեկորներ, արվում էին զոհաբերություններ, արտասանվում աղոթքներ.

Հեռացե՛ք, ցրվեցե՛ք և սողալով ցրիվ եկեք այստեղից,
Նրա՛ համար են հայրերն այս վայրը նախապատրաստել[46]:

Կատարվում էին բազմաթիվ այլ արարողություններ, որոնք կոչված էին ապահովելու ննջեցյալի ծիսական մաքրությունը: Այդ բոլորը քիչ համարելով, հուղարկավորողները ծիսական զանազան հնարքների օգնությամբ փորձում էին «նախնիների ճանապարհով ընթացողի» համար ձեռք բերել աստվածների բարյացակամությունը: Ըստ երևույթին, հատկապես կարևոր էր հանգուցյալի հանդեպ այն աստծո բարեհաճությունը, ով տնօրինում էր ճանապարհները և ուղեկցում մահացածներին[47]: Ճանապարհների պահա-

---

[40] А. Р. И с р а е л я н. Колокольчики и бубенцы в армянских народных верованиях. — ИФЖ, 1993, № 1-2, с. 148-149.

[41] Վ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Ֆ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. Քարաշամբի դամբարանադաշտի №117 դամբարանը.— ԼՀԳ, 1986, № 4, էջ 91:

[42] Օ. Խ ն կ ի կ յ ա ն. Պեղումներ Տանձավեր և Շիկահող գյուղերում.— ՊԲՀ, 1975, №2, էջ 239:

[43] Օ. Ս. Խ ն կ ի կ յ ա ն. Սիսիանի միջին բրոնզեդարյան դամբարանները.— ԲԵՀ, 1992, №3, էջ 42:

[44] Օ. Ա. Դ ա ն ի ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 76:

[45] Գ. Ա. Տ ի ր ա ց յ ա ն. Культура древней Армении. VI в. до н. э. — III в. н. э. (по археологическим данным). Ереван, 1988, с. 102-103, рис. 21.

[46] Ригведа. Избранные гимны. Перевод, комментарий и вступительная статья Т. Я. Елизаренковой. М., 1972, X, 14, 9.

[47] Ригведа. Мандалы I-IV. Издание подготовила Т. Я. Елизаренкова. М., 1989, I, 42.

պան այդ աստվածությունը, որը սերտորեն առնչվում էր արեգակի հետ և մարմնավորում նրա բարեբեր ուժը, Պուշանն էր, որի մասին տեղեկություններ են պահպանվել հին հնդկական գրական հուշարձաններում: Պուշանը (բառացի նշանակությունը՝ «ծաղկող», «փթթող») նպաստում էր արոտավայրերի, անասունների և մարդկանց բարգավաճմանն ընդհանրապես և, հավանաբար, օգնում էր նաև ննջեցյալների վերածննդին[48]: Հին և նոր ասավածների ընդհարման ժամանակ նրա ստորին ծնոտը պոկվել էր (այլ տարբերակով՝ փչրվել էին ատամները), որից հետո նա սնվում էր շիլայով: Պոկված ստորին ծնոտը դարձել էր Պուշանի կերպարի առանձնահատկություններից մեկը[49]: Եթե նկատի ունենանք, որ հին մարդու մտածողությամբ որևէ աստծո, հերոսի կամ առասպելական էակի բարեհաճությունը նվաճելու լավագույն միջոցը նրան նմանվելն էր, իրեն նրա հետ նույնացնելը[50], ապա, հավանական է, որ հովանավոր աստվածությանը նմանեցնելու միտումով զոհաբերեին հանգուցյալի ծնոտը, իսկ ուտելիքների թվում մի ման շիլա դնեին դամբանասրահում որպես զոհաբերություն Պուշանին: Իր անվան ստուգաբանությամբ, միաժամանակ բնությանը և հանդերձյալ աշխարհին առնչվածությամբ, բերրիություն և բարեկեցություն պարգևելու ունակությամբ և մի շարք այլ բնորոշ գծերով վեդայական Պուշանի կերպարը կարող է համադրվել հայկական դիցաբանության Արային:

Ինչպես վերն ասվեց, դամբարանում գտնված կավանոթներից մեկը ջարգված էր, և բեկորներից երկուսը գտնվում էին անոթից բավականաչափ հեռու, հանգուցյալի ոտքերի մոտ, դամբանասրահի հատակին: Հետևաբար, սափորը ջարգվել էր որոշակի դիտավորությամբ, նախքան ջրաբերուկների դամբանասրահ թափանցելը: Խեցանոթները կոտրելու ծիսական գործողությունը վաղուց հետազոտողների տեսադաշտում է: Այն, ըստ երևույթին, ննջեցյալի վերածննդին նպատակաուղղված արարողություններից էր[51]: Կարելի է ենթադրել, որ գույքը ջարգելու սովորության հիմքում ընկած է այն պատկերացումը, որ ամբողջականությունը կորցնելուց հետո միայն այնկողմնային աշխարհում իրերը կարող են ծառայել իրենց նպատակին:

Պեղածո նյութը հնարավորություն է ընձեռում խոսելու նաև թաղման ծեսում օգտագործված անոթների հարդարման խնդրի շուրջ: Վերը հիշատակվեց, որ հետազոտված դամբանասրահում հայտնաբերված կարասի իրանի ստորին մասում, նստուկին կից 1 սմ տրամագծով անցք է արված (աղ. II, 1), իսկ կարճապարանոց կավանոթի ուսերին ատամնավոր պտտադրոշմով արված են կետազարդ բեկյալ գծեր՝ օձի և, հավանաբար, չան ոճավորված պատկերներ (աղ. II, 3): Երկու դեպքում էլ լրահարդարումները կատարվել են խեցանոթների թրծումից հետո (այդ իսկ պատճառով զարդաբանվածքն անհրաժեշտ որակը չունի), մինչդեռ, ինչ խոսք, ա-

[48] Ригведа, X, 14, 8.

[49] Мифы народов мира, т. 2. М., 1982, с. 353; Ю. А. Ш и л о в. Космические тайны курганов. М., 1990, с. 129-130.

[50] М. Э л и а д е. Космос и история. Избранные работы. М., 1987, с. 55.

[51] Э. Ц е р е н. Библейские холмы. М., 1966, с. 364, 385.

ասվել նպատակահարմար կլիներ նույնը կատարել թրծումից առաջ, թաց կավի վրա: Հետևաբար, այս երկու խեցանոթներն էլ չեն պատրաստվել հատկապես հուղարկավորության համար և, ամենայն հավանականությամբ, մինչ թաղումը գործածվել են: Հուղարկավորությունից առաջ դրանց վրա լրացուցիչ շտկումներ են կատարվել՝ անոթները համապատասխանեցնելով թաղման ծեսի պահանջներին: Այս առումով հետաքրքիր է հիշատակել, որ ուշբրոնզեդարյան դամբարաններում գտնվող այն անոթները, որոնց փորագիր և փայլեցմամբ կատարված զարդերը ծածկված են մածուկային ներկով արված պատկերներով, ներկվել են թրծելուց հետո[52]*: Տեղին է նաև նկատել, որ Վանի թագավորության ժամանակաշրջանում նույնպես որպես աճյունասափոր օգտագործված կավանոթների ուսերին անցքեր են արվել թրծելուց հետո, հավանաբար, թաղումից անմիջապես առաջ*[53]*:*

Ինչպես հայտնի է, ավանդական պատկերացումներով օձը համարվում է ստորգետնյա աշխարհի բնակիչ: Նա ստորին աշխարհի հիմնական առասպելաբանական կակն է[54]*, որն ապրում է կենաց ծառի արմատների մոտ*[55]*: Առասպելական օձի կերպարը կապված է ոչ միայն մահվան, այլև վերածննդի գաղափարի հետ*[56]*: Հնից է դալիս նաև այնկողմնային աշխարհում հոգիներին ուղեկցող շների մասին պատկերացումը: Ժողովրդական հավատալիքներում շունը (ինչպես և գայլը) միջնորդ է ողջերի և մեռածների աշխարհների միջև: Շունը, լինելով մահվան թագավորության պահապանը, միաժամանակ հարություն է տալիս մահացածներին*[57]*: Այնպես որ, հիշյալ սափորի վրայի օձի և շան ոճավորված պատկերները, խորհրդանշելով այնկողմնային աշխարհի սահմանները կամ սահմանային ջրերի ակունքն ու գետարևրանը, միգուցե, մահվան և վերածննդի գաղափարների փոխկապակցվածության արտահայտություններն են: Այս անոթն իր պարունակությամբ, հավանաբար, նախանշված է եղել այնկողմնային աշխարհի տիրակալի համար: Վերածննդի, հարության գաղափարի հետ կարող է կապված լինել դամբանասրահում տեղադրված կարասի նստուկի մոտ անցք փորելը, որը, ինչպես վերն ասվեց, արվել է խեցանոթը ծիսական նպատակներին հարմարեցնելու միտումով, թրծումից հետո: Բրոնզեդարյան դամբարաններում հաճախ են հանդիպում խեցանոթներ, որոնց իրանի ստորին մասում, հատակին կից կամ նստուկին անցքեր են արված լինում: Իրանի ստորին հատվածում շաղափված անցք ունեն Վերին Նավեր դամբարանադաշտի № 12 դամբանաբլուրի փոքր «կարասները» և № 23 դամբանաբլու-*

---

[52] К. Н. Пицхелаури. *Նշվ. աշխ., էջ* 40: *Վ. Հովհաննիսյան, Ֆ. Մուրադյան. Նշվ. աշխ., էջ 95:*

[53] Б. А. Куфтин. Урартский "Колумбарий" у подошвы Арарата и Куро-Араксский энеолит.— "Вестник Государственного музея Грузии", вып. XIII-B, Тбилиси, 1944, с. 70. *Հ. Ա. Մարտիրոսյան, Ռ. Մ. Թորոսյան. Արգիշթիխինիլիի սարկոֆագը.— ՊԲՀ, 1986, №3, էջ 224:*

[54] Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. *Նշվ. աշխ., էջ* 525:

[55] Вяч. Вс. Иванов, В. Н. Топоров. Исследования в области славянских древностей. М.,1974, с. 5.

[56] В. Я. Пропп. Исторические корни волшебной сказки. Л., 1986, с. 275.

[57] *Ս. Հարությունյան. Մի զրվագ հայ առասպելաբանությունից.— ՊԲՀ, 1989, №*1, *էջ 157-166:*

րի կարմիրբերդյան կճուճը,[58] Երևանի Կիրզա (Զեյթուն) թաղամասի դամբարաններից մեկում հայտնաբերված անոթը (մ. թ. ա. XVII–XVI դդ.)[59], Լճաշենից (դամբ. № 6 և 38), Գողթից[60] գտնված կավանոթները, Սասնաշենի № 1 դամբարանի ննջեցյալի գլխավերևում դրված անոթներից մեկը[61], Գեղարոտի № 2 կրոմլեխի ուշբրոնզեդարյան խեցանոթներից մեկը (ՀՊՊԹ, հավաք. 2209/9), Անգեղակոթի № 7 դամբարանում հայտնաբերված երկու անոթները (մ. թ. ա. IX–VIII դդ.)[62]: Մենք դիտավորյալ մատնանշում ենք միայն այն անոթները, որոնց անցքերը փորվել են նստուկին կից (ուսերին անցքեր ունեցող անոթների, ինչպես նաև նստուկին արված անցքով աճյունասափորների շրջված դիրքով դործածումը թաղման ծեսում կապված է այլ հավատալիքների հետ): Զենք կարող չհամաձայնվել, որ հիշյալ խեցանոթների մեջ հեղուկ է լցվել, իսկ անցքերը ծորակների դեր են կատարել[63]: Սակայն, ըստ երևույթին, ճիշտ չէ նախկինում արված այն դիտողությունը, թե «նման կավանոթները կապված են եղել հեղուկի ամենօրյա օգտագործման հետ»[64]: Կարծում ենք, վերն ասվածից արդեն պարզ դարձավ, որ այս խեցանոթներն ամենօրյա գործածության ընթացքում «ծորակներ» չեն ունեցել, անցքերն արվել են թաղման ծեսի պահանջներից ելնելով: Հավանաբար, անհրաժեշտ էր, որպեսզի անոթի մեջ լցված հեղուկը հոսեր և տարածվեր դամբանասրահում: Այս արարողության հիմքում կարող էր ընկած լինել մկրտության գաղափարը, որը համարժեք է ծիսական մահվանը և որին հետևում է վերածնունդը: Տիեզերական մոտեցմամբ այն նույնացվում է ջրհեղեղին[65]: Կյանքի ջրային նախասկզբի, ծննդի և հարության ըմբռնումները հին հավատալիքներում սերտորեն միահյուսված էին իրար: Թալմուդում ասացվածք կա. «Աստված երեք աղբյուր ունի՝ անձրևի, ծննդի, մեռյալների հարության»[66]: Իրանական ավանդույթում նոր տարվա օրն աստված մեռյալներին հարություն է պարգևում և հրամայում է երկնքին անձրև տեղալ: Հին հնդկական Վարունա աստվածությանը ձոնված օրհներգերից մեկում ասվում է.

Ցածում անցք ունեցող տակառից՝ Վարունան
Ջուրը թափեց երկու աշխարհների վրա (և) օդային տարածության մեջ:
Նրանով ողջ տիեզերքի արքան
Ոռոգում է հողը, ինչպես անձրևը հացահատիկը[67]:

---

[58] А. Е. Симонян. Новая трактовка социокультурной общности эпохи средней бронзы Армении (по данным погребения № 12 из могильника Верин Навер).— ИФЖ, 1990, № 1, с. 193. Նույնի՝ Два погребения эпохи средней бронзы могильника Верин Навер. — СА, 1984, № 3, с. 126.

[59] *Ս. Ամիրյան. Հնագիտական նոր հայտնաբերում Երևանի տերիտորիայում.— ՊԲՀ, 1969, № 3, էջ 268, աղ. I, 1:*

[60] *Նույն տեղում, էջ 271, աղ. I, 12:*

[61] *Սասնաշենի հիշյալ դամբարանի չհրատարակված նյութը սիրալիր կերպով մեզ է տրամադրել հնագետ Պ. Ս. Ավետիսյանը:*

[62] *Օ. Խնկիկյան. Պեղումներ Անգեղակոթում.— ԼՀԳ, 1978, № 3, էջ 104:*

[63] *Ս. Ամիրյան. Նշվ. աշխ., էջ 272:*

[64] *Նույն տեղում:*

[65] М. Элиаде. Նշվ. աշխ., էջ 72:

[66] *Նույն տեղում, էջ 75:*

[67] Ригведа, V, 85, 3.

Մեռյալները, որոնք չէին ուզում հեռանալ դեպի «հողե տուներ», նեռում և գթություն էին հայցում տիեզերքի տիրակալ Վարուներից: Նրա տակառից թափվող ջուրը, հավանաբար, պիտի օգներ մեռյալների հարությանը: Հիշենք նաև, որ դամբարաններում հայտնաբերվել են նաև խեցանոթներ, որոնց մեջ գետաքար է դրված եղել (Արթիկ[68], Աշտարակ[69]): Գետաքարը, անշուշտ, խորհրդանշում է ջուրը, որը, հետազոտողների կարծիքով, դամբարանը չար ոգիներից մաքրագործելու միջոց է[70]:

Այսպիսով, Արուճի դամբարանադաշտի №5 դամբարանում հանգուցյալն ամփոփվել է դիադրման եղանակով, «քնածի» դիրքով: Պեղումներով հայտնաբերված փաստերի հիման վրա կարելի է եզրակացնել, որ կատարվել են մի շարք արարողություններ (ննջեցյալի ստորին ծնոտը հանդուցյալների հովանավոր աստվածությանը զոհաբերելը, խեցանոթներից մեկը թաղումից անմիջապես առաջ օձի և շան պատկերներով զարդաբանելը, մեկ այլ կավանոթը կոտրելը, դամբարանում անցքով օժտված անոթ տեղադրելը), որոնք ուղղված են եղել թաղման ծեսի հիմքում ընկած մեկ միասնական նպատակի իրագործմանը հանդուցյալի վերածնունդը նախապատրաստելուն: Հավանաբար, նույն դերխնդրով էր պայմանավորված թաղման համալիրի կառուցվածքը: Վերածնունդը նախապատրաստող ծիսական համակարգը լրացվել է ննջեցյալի ծիսական մաքրությունն ապահովող պահպանական մի շարք արարողություններով (կրոմլեխի կառուցում, կրակի և ջրի օգնությամբ թաղման համալիրի տարածքի մաքրագործում, դամբարանով մեկ վանակատի և կայծքարի բեկորների սփռում, ննջեցյալի գլխի մոտ դրանց զետեղում և այլն), առանց որի, հավանաբար, անիմաստ կլիներ վերածննդի հույս ունենալ:

ПОЗДНЕБРОНЗОВЫЙ КУРГАН № 5 МОГИЛЬНИКА АРУЧ

(Попытка интерпретации погребального обряда)

ГАРЕГИН ТУМАНЯН

Резюме

В 1990 г. Шамирамским отрядом Института археологии и этнографии НАН Республики Армения в могильнике Аруч (округ Арагацотн) раскопано погребение, наземные сооружения которого (курган высотой 0.7-0.8 м, кромлех и примыкающие к нему постройки) были снесены во время мелиоративных работ. Погребальная камера размерами 3,50 х 2,10 х 1,25 м представляет собой прямоугольный ящик из уложенных плашмя туфовых плит, ориентированный на

---

[68] Т. С. Хачатрян. Древняя культура Ширака, с. 150.

[69] *Գ. Թումանյան. Աշտարակի խոջաբաղերի ուշբրոնզեդարյան դամբարանները.– ՊԲՀ, 1997, №2, էջ 253:*

[70] Т. С. Хачатрян. Древняя культура Ширака, с. 149.

запад. Усопший был погребен способом трупоположения, на правом боку, в позе "спящего", головой на запад, лицом на юг. Отделенная от черепа нижняя челюсть лежала сзади от головы погребенного. У головы находился обсидиановый отщеп, обнаружены ребра крупных и мелких рогатых животных. У западной стены находились четыре керамических сосуда. На основании раскопанного археологического материала делается попытка интерпретации ритуалов, которыми был обставлен погребальный обряд, имевший целью поддержание ритуальной чистоты и приготовление возрождения погребенного. Курган датируется XV-XIV вв. до н. э.

LATE BRONZE AGE BARROW № 5 IN ARUCH CEMETERY
(An attempt of funeral rites interpretation)

GAREGIN TUMANYAN

S u m m a r y

In 1990 a barrow was excavated in cemetery Aruch (Aragatsotn Marz) by "Shamiram" team of the Institute of Archaeology and Ethnography, NAS, Republic of Armenia. The surface constructions of the barrow (burial mound with height of 0.7-0.8m, cromlech, and adjacent buildings) were carried away during reclamation works. The funeral camera with a size of 3.50x2.10x1.25m was a rectangular box built from flat laid slabs of tuff and directed to west. The corpse was interred on its right side in a "sleeper" position with the head to the west and the face turned southwards. The lower jaw was separated from the skull and placed behind the head of the corpse. There was an obsidian chip next to the head. At the west wall of the funeral camera ribs of domestic horned animals and four ceramic vessels were found. On the basis of the excavated archaeological material, an attempt was made to interpret the rituals, which were the constituents of the funeral rites. The latter was aimed to maintain the ritual purity and prepare revival of the buried. The barrow is dated to the 15th–14th centuries B.C.